Արձանագրություն N 3

«ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բյուզանդի 1/3, 205 սենյակ **«08» «02» 2019թ**
ժ.14:30

<u>Մասնակցում էին՝</u>
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մաղաքյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Մանասյանը, Լ. Բաբաջանյանը, Ա. Անանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

<u>(Վ. Մաղաքյան)</u>

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ **«ԱՎՏՈՍՏՈՊ» ՍՊԸ-ին**, 04.02.2019թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:
- 04.02.2019թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ **«ԱՎՏՈՍՏՈՊ» ՍՊԸ-ի**՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների ,ինչպես նաև սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյաառկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 07.02.2019թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			**Մասնակցի հայտի գնահատման արդյունքները**
			Մասնակցի անվանումը
			«ԱՎՏՈՍՏՈՊ» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	«Մասնագիտական փորձառության» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
3	«Ֆինանսական միջոցներ» չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
4	Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը	Բավարար Անբավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Վ. Մաղաքյան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

Ընտրված մասնակից ճանաչել՝ **«ԱՎՏՈՍՏՈՊ» ՍՊԸ-ին**,

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		**Վ. Մաղաքյան**
Անդամներ՝		**Դ. Մանասյան**
		Լ. Բաբաջանյան
		Ս. Անանյան
Քարտուղար՝		**Հ.Ղազարյան**